

ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱ

Մ. Մ. ՍԻՄՈՆՅԱՆ

ԳԱՐՆԱՆԱՅԱՆ ՑՈՐԵՆԻ ՑԱՆՔԻ ՁԵՎԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԱԽՏԱՅԻ ՇՐՋԱՆԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ագրատեխնիկական միջոցառումների ամբողջական սխեմանում ցանքի ձևեր համարվում է կարևորագույն միջոցառում, որը պետք է ուղղված լինի բույսի բիոլոգիական հատկանիշների, արտադրական խնդիրների և հողակլիմայական գործոնների տեսակետից ավելի կուլտուրայի համար ամենաընդարձակորեն արտաքին պայմաններ ստեղծելուն:

Հայտնի է, որ ինչքան զարգացած է բույսը, այնքան էլ նրան հողի մեծածախ պատճառ պետք է տրամադրվի:

Բայց բույսերի հզորություն մեծացումը որոշ գեոգրիում չի ուղեկցվում մեկ միավոր տարածությունից ստացվող բերքի մեծացմամբ: Դրա համար էլ ցանքի հիմնական նպատակն է՝ լավագույն ձևով տեղաբաշխել սերմերը մեկ միավոր տարածություն վրա, ապահովելով նրանց համար սնման մակերեսի լավագույն ձևն ու չափը: Ցանքի միջոցով պետք է այնպես կանոնավորել բույսերի տեղաբաշխումը, որ նրանց մաքսիմալ խտությունը գեոգրիում մեկը մյուսի վրա սովոր չզցի:

Ներկայումս արտադրություն մեջ կիրառվում են ցանքի մի քանի ձևեր, որոնք բոլորն էլ լինելով շարժացան, իրարից տարբերվում են մակերեսի վրա իրենց շարքերի տեղադրման բնույթով ու միջշարքային տարածություն մեծությամբ:

Ցանքի գոյություն ունեցող բոլոր ձևերից այժմ արտադրության մեջ կիրառվում են՝ սովորական շարժացանը, լայնաշար և ժապավենաձև ցանքը, նեղաշար ցանքը, խաչաձև կամ շախմատաձև ցանքը:

Ցանքի ամենատարածված ձևը ներկայումս 12,5—15 սմ միջշարքային տարածությամբ սովորական շարժացանն է: Շարժացանի առավելությունը շաղացանի հանդեպ հանրահայտ է, ուստի հարկ չենք համարում այդ հարցը այստեղ քննարկելու:

Ցանքի սովորական շարքային ձևի գեոգրիում ցուրենի բարձր նորմաներով կատարած ցանքերում բույսերը տարածության վրա անհավասարաչափ են բաշխվում, այսինքն՝ շարքի ուղղությամբ ստացվում է բույսերի գերխտություն՝ միջշարքային համեմատաբար մեծ տարածության առկայությամբ: Հետևապես, ցանքի սովորական շարքային ձևը պետք է փոխարինվի ցանքի մի այլ ձևով, որը կարող է ապահովել մեկ միավոր տարածության վրա բույսերի ավելի համաչափ դասավորություն: Դա, բույսերի աճման ու զարգացման համար ավելի բարենպաստ պայմաններ ստեղծելով, փոքրացնում է վեգետացիայի բնածաղկում բույսերի անկման տոկոսը և, վերջին հաշվով, բարձրացնում է բերքատվությունը:

Դյուրատնտեսական արտադրության պրակտիկայում հացահատիկային

կուլտուրաների ցանքի շարացան եղանակին անցնելուն գուզընթաց գիտահետազոտական միտքն աշխատել է ավյալ վայրի հոգսկլիմայական պայմանների հետ կապված՝ շարքերի ավելի էֆեկտիվ բաշխվածության ձև որոնելու հարցի վրա:

Այդ ուսումնասիրություններն բնթանում էին երկու ուղղությամբ. մի կողմից ուսումնասիրվում էր լայնաշար (մեկընգմեջ շարք) և ժապավենաձև ցանքը, իսկ մյուս կողմից՝ մոտիկացրած շարքերով նեղաշար ցանքը:

Լայնաշար ցանքերի էֆեկտիվության ուսումնասիրությունների ժամանակ հիմնական ուշադրությունը դարձվում էր թփակալման հաշվին բույսերի մթերատվության բարձրացման վրա: Այդ կատարվում էր մեկ միավոր տարածության վրա ցանքի նորմայի պակասեցման միջոցով:

Ցանքի այդ ձևերը հատկապես անարդյունավետ են թփակալման ցածր էներգիա ունեցող այնպիսի հացահատիկային կուլտուրաների նկատմամբ, ինչպիսիք են գարնանացանները: Արտադրության մեջ ցանքի վերահիշյալ ձևերի լայն ներդրմանը խանգարում է միջշարքային տարածությունների հաճախակի փխրեցումը, որը, բացի հոգը փոշիացնելուց, նաև արտադրության միջոցների մեծ ծախս է պահանջում:

Ինչ վերաբերում է հացահատիկային կուլտուրաների ցանքի նեղաշար ձևի ուսումնասիրություններին, ապա դրանց նպատակն է կղել գտնել ցանքի այնպիսի ձև, որը, սովորական շարային ցանքի համեմատությամբ, հատկապես ցանքի բարձր նորմաների գեպքում, ապահովի մակերեսի վրա բույսերի ավելի համաչափ դասավորությունը:

Նեղաշար ցանքի ձևի վրա գեոհա 1881 թվականին ուշադրություն է դարձրել Պ. Ա. Կոսսիչը: Նա խորհուրդ էր տալիս մինչև 7,5 սմ նեղացրած միջշարքային տարածությամբ ցանք կատարել [7]: Նալիվկինի [9] ավյալներով, Բենդենշուկի փորձախյանում նեղաշար ցանքի գեպքում բերքի հատիկի հավելումը սովորական շարքացանի համեմատությամբ կազմել է 1,15 ց/հա: Լապպոյի ավյալներով [5], գարնանացան ցորենի բերքի միջին հավելումը նեղաշար ցանքի գեպքում կազմել է 5,3 ց/հա:

Հետազոտողները գարնանացան հացահատիկների բարձր բերքը, ցանքը 6,5—7,5 սմ միջշարքային տարածությամբ և սովորական նորմայով կատարելու գեպքում, բացատրում են նրանով, որ բույսերը մակերեսի վրա ավելի հավասարաչափ են բաշխվում, որովհետև շարքերի թիվը մեծանում է, և համապատասխանաբար փոքրանում է բույսերի խտությունը շարքում: Այսպիսի բաշխվածությունը բույսերին հնարավորություն է տալիս ավելի լրիվ օգտվելու միջավայրի պայմաններից, որի հետևանքով փոքրանում է վեգետացիայի բնթացքում փչացած բույսերի տոկոսը, հետացողունների թիվը, ստեղծվում է ավելի համաչափ բուսածածկ, մեծանում է արդյունավետ թփակալումը և վերջիվերջո այդ բոլորով էլ պայմանավորվում է բերքի բարձրացումը:

Բույսերի աճման ու բերքատվության վրա միջշարքային տարածության նեղացման դրական ազդեցությունը մեծանում է հատկապես բերրի հողերում, բարձր ագրոտեխնիկայի պայմաններում և ցանքի նորման մեծացնելու դեպքում: Դրանից ելնելով, հոգային օրգանները խորհուրդ են տալիս ցորենի նեղաշար ցանքի գեպքում ցանքի նորման մեծացնել 10—

Բարձր բերքի վարպետները նույն նպատակով լայնորեն օգտագործում են գարնանացան հացահատիկների շախմատածե կամ խաչածե ցանքի ձևը: Ցանքի այդ ձևը նույնպես հին պատմություն ունի: Դեռևս XIX դարի 90-ական թվականներին Վինները [2] տառաջարկեց անցնել խաչածե ցանքին: Ցանքի այդ ձևը նա համարում է մի միջոցառում, որն ունի սերմը շարային կոանակով բաշխելու և խիտ շաղաքանի առավելությունները:

Հեղինակներից շատերը [1, 3, 4, 6, 7, 8, 10], քննարկելով արտադրական պայմաններում և գիտահետազոտական հիմնարկների գծով կատարված խաչածե ցանքի էֆեկտիվության ուսումնասիրությունների արդյունքները, խաչածե ցանքը բնութագրում են որպես ցանքի արդյունավետ ձև, որը հացահատիկային կուլտուրաների բերքի նկատելի հավելում է ապահովում ցանքի սովորական շարքացան ձևի համեմատությամբ:

Հայկական ՍՍՌ-ի պայմաններում ցանքի նեղաշար ու խաչածե ձևերի էֆեկտիվության վերաբերյալ գրեթե ուսումնասիրություններ չկան:

Այգիկուսի ուսումնասիրություններ մենք կատարել ենք 1951—1953 թթ. ընթացքում Ախտաշի շրջանի պայմաններում: Դաշտային փորձնական աշխատանքները կատարվել են Սպակ գյուղի Մոլոտովի անվան կոլտնտեսությունում: Փորձերը իրականացվել են ծովի մակարդակից մոտավորապես 1750—1800 մ բարձրության վրա, կախյալն մեխանիկական կազմ ունեցող, հումուսով հարուստ, լվացված սևահողում: Ուսումնասիրվել է ցանքի ձևերի ազդեցությունը գարնանացան ցորենի գալգալոս և կունդիկ սորտերի վրա աննպաստիվության բարձր և ցածր ֆոնների վրա:

Պարարտացրած ($N_{75} P_{60} K_{60}$) և չպարարտացրած ֆոնների վրա փորձարկվել է ցանքի երեք ձև—սովորական շարքացան՝ 13 սմ, միջշարքային տարածությամբ, նեղաշար ցանք՝ 6,5 սմ, միջշարքային տարածությամբ և խաչածե ցանք՝ 13 սմ $\times$ 13 սմ սխեմայով: Ուսումնասիրության բոլոր տարիներին մեր դաշտային փորձերին նախորդ է ծառայել աշնանացան ցորենը: Վաղ գարնանը բոլոր գեպքերում ցրտահերկված դաշտերը փոցվել են և այնուհետև կատարվել են դաշտի խոր փխրեցումն ու ցանքը: Ցանքի նորման ընդունվել է հեկտարին 6 միլիոն հատիկ: Բոլոր գեպքերում վարը կատարվել է տրակտորային գութանով, խոր փխրեցումը՝ բաղամոխիանիներով, փոցխումը՝ զիզգադներով: Ցանքը կատարվել է նախօրոք ախտահանված սերմերով, տրակտորային շարքացանով: Նեղաշար ցանքի համար գոյություն ունեցող հատուկ նեղաշար շարքացաններ չլինելու պատճառով ցանքը 6,5 սմ միջշարքային տարածությամբ կատարվել է 2 սովորական շարքացաններ միմյանց կցելով այն հաշվով, որ հետևի շարքացանի խոփիկներն անցնեն առաջին շարքացանի խոփիկների թողած միջշարքային տարածություններով: Խաչածե ցանքը կատարվել է նույնպես սովորական շարքացանով՝ 13 սմ միջշարքային տարածությամբ:

Վեգետացիայի ամբողջ ընթացքում տարվել են մանրամասն ֆենոլոգիական գիտողություններ, որոշվել է սերմերի դաշտային ծլունակությունը, մինչև բերքահավաքը կենդանի մնացած բույսերի թիվը, տարբեր վարիանտների մոլայնությունների առաժանցը և այլն: Փորձերը իրականացվել են չորս կրկնողությամբ, հաշվառվող փորձամարդերի մեծությունը կղել է 100 մ²:

Լաբորատոր անալիզների համար ամեն տարի բերքահավաքի նախօրյակին յուրաքանչյուր վարիանտի առաջին և երրորդ կրկնողություններից

վերցվել են նմուշ խրձեր: Բերքը հաշվառվել է ընդհանուր մասսան կշռելու եղանակով:

Մեր ուսումնասիրություններից ստացվել են հետևյալ օրինաչափությունները.

Բույսերի վեղեռացիոն փուլերի անցման տեսակետից մեր փորձարկած ցանքի երեք ձևերի՝ սովորական շարքացանի, նեղաշար ու խաչաձև ցանքի վարիանտների միջև էական տարբերություններ չեն եղել: Խիստ տարբերություններ (մինչև 5—10 օր) են նկատվել պարարտացված և չպարարտացված վարիանտների միջև: Թե պարարտացված և թե չպարարտացված ֆոսֆորի վրա կունդիկ սորածը գալգալուսից 6—8 օրով շուտ է հասունացել:

Հետադադությունը բոլոր տարիներին ցանքի նեղաշար ու խաչաձև ձևերի վարիանտներում մոլախոտային բուսականությունը թե քանակով և թե չոր կշռի արտահայտությունը, սովորական շարքացան ձևի հետ համեմատած, միշտ էլ պակաս է եղել: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ զարնանացան ցորենի ցանքերում 13 սմ միջշարքային տարածությամբ ցանք կատարելու դեպքում նպատավոր պայմաններ են ստեղծվում մոլախոտային բուսականության զարգացման համար: Խաչաձև ու նեղաշար ցանքի ձևերի վարիանտներում միջշարքային տարածություններն ավելի փոքր են լինում և բույսերն ավելի փարթամ են աճում, ուստի նրանք կարողանում են իրենց համաչափ բաշխվածությամբ ճնշել մոլախոտային բուսականությունը: Աղյուսակ 1-ի տվյալներից երևում է, որ բոլոր վարիանտներում մոլախոտերի քանակը բուսածածկում ցորենի հասկակալման շրջանում մեծանում է, իսկ մինչև բերքահավաքի շրջանը խիստ պակասում է: Այդ պակասումը ավելի լինունսով է կատարվում խաչաձև ու նեղաշար ցանքի ձևերի վարիանտներում:

Աղյուսակ 1

Փարնանացան ցորենի ցանքերի մոլախոտվածությունը, կախված ցանքի ձևից (մոլախոտերի թիվը տոկոսներով)

Ցանքի ձևը	Ցանքի ձևը	Գալգալուս			Կունդիկ		
		թվականական նակ	հավականական նակ	բերքահավականական նակ	թվականական նակ	հավականական նակ	բերքահավականական նակ
Փարնանացան	Սովորական շարքացան	14	16	8	14	17	8
	Նեղաշար ցանք	10	13	6	10	14	5
	Խաչաձև ցանք	11	12	7	10	13	6
Չպարնանացան	Սովորական շարքացան	17	20	11	17	20	10
	Նեղաշար ցանք	13	18	8	14	16	9
	Խաչաձև ցանք	13	17	10	12	15	8

Մեր դիտողություններից պարզվել է, որ նեղաշար ու խաչաձև ցանքի դեպքում ցորենի դաշտային ծլունակությունը միջին հաշվով 5—8 տոկոսով պակաս է սովորական շարքացանի համեմատությամբ: Բույսերի նորարացումը շարքում, ինչպես նաև ցանքի նորմայի փոքրացումը իջեցնում է ցորենի դաշտային ծլունակության տակոսը: Սակայն, քանի որ նեղաշար ու խաչաձև ցանքերում ստեղծվում է բույսերի ավելի համահավասար բաշխվածություն, ուստի մինչև բերքահավաքը սրահպանվող բույսերի թիվը մեծ է լինում, այլ խոսքով՝ այդ վարիանտներում բույսերն ավելի բարենպաստ պայմաններում են լինում: Արդյունակ 2-ի ավյալներից երևում է, որ չնայած սովորական շարքացանի դեպքում ցորենի դաշտային ծլունակության տոկոսն ավելի բարձր է, այսինքն՝ մեկ միավոր տարածության վրա ավելի շատ բույսեր են եղել նեղաշար ու խաչաձև ցանքերի համեմատությամբ, բայց և այնպես վեգետացիայի բնթուցքում անբարենպաստ պայմանների հետևանքով ամենից շատ առժկ էն սովորական շարքացանի վարիանտների բույսերը: Այդ օրինաչափ երևույթը նկատվել է և՛ պարարտացրած, և՛ չպարարտացրած ֆոնների վրա, ցորենի թե կունդիկ և թե դալգալուս սորտերի նկատմամբ:

Այսուհանդիս ավյալներից երևում է նաև, որ բոլոր դիտողությունների ժամանակ ոչնչացող բույսերի թիվը ամենից մեծ է սովորական շարքացանի վարիանտում, ինտրիկ, ոչնչացման բացարձակ թիվը ավելի մեծ է չպարարտացրած ֆոնի վրա:

Չնայած նրան, որ բնդհանրապես սովորական շարքացանի վարիանտում ծիլերի թիվը սկզբնական շրջանում խաչաձև ու նեղաշար ցանքի ձևերի համեմատությամբ մեծ է, այնուամենայնիվ վեգետացիայի շրջանում հասնում է մի մոմենտ, երբ խաչաձև ու նեղաշար ցանքերի վարիանտներում մնացած բույսերի թիվը հավասարվում է այնուհետև սկսում է գերակշռել սովորական շարքացանի բույսերին ու մինչև վեգետացիայի վերջը համեմատվող վարիանտների միջև բույսերի զգալի տարբերություն է նկատվում: Նեղաշար ու խաչաձև ցանքի վարիանտներում վեգետացիայի վերջում բույսերի թիվը ավելի մեծ է լինում, քան սովորական շարքացանի վարիանտում:

Մենդատության բարձր ֆոնի վրա մինչև բերքահավաքը կենդանի մնացած բույսերի թիվը գաղալուս սորտի մոտ ցանքի սովորական շարքացանի դեպքում՝ կազմում է 79 տոկոս, նեղաշարի դեպքում՝ 85 տոկոս, խաչաձևի դեպքում՝ 83 տոկոս: Մենդատության ցածր ֆոնի վրա սովորական շարքացանի դեպքում մնացած բույսերի թիվը կազմում է 71 տոկոս, նեղաշարի դեպքում՝ 77 տոկոս և խաչաձևի դեպքում՝ 77 տոկոս:

Նույնանման օրինաչափություններ նկատվում են նաև կունդիկ սորտի վարիանտներում: Հեշտ է նկատել, որ սովորական շարքացանի և նեղաշար ցանքի միջև գոյություն ունեցող այդ տարբերությունները շատ թույլ կերպով են արտահայտվում ցանքի նեղաշար ու խաչաձև ձևերի վարիանտների միջև:

Նկատվում է նաև, որ չպարարտացրած ֆոնի վրա վեգետացիայի վերջում բույսերի բնդհանուր թիվը դրսևորեն փոքր է: Այստեղից հեշտ է եզրակացնել, որ Ախտայի շրջանի պայմաններում վեգետացիայի շրջանում մնացած հասկալի բույսերի թիվը մեծապես կախված է հողի մեջ գտնվող մատչելի սննդանյութերի քանակից:

Վերը ասածներից պարզ է, որ ցանքի նեղաշար ու խաչաձև ձևերի դեպքում բույսերը, սովորական շարքացանով կատարած ցանքի ձևի համեմատությամբ, ավելի բարենպաստ պայմանների մեջ կգտնվեն և աճման ու զարգացման ավելի բարձր ցուցանիշներ կտան:

Մեր անալիզի ավյալներից երևում է, որ հասկի երկարությունը պալպուս և կունդիկ սորակերի մոտ սննդատուության բարձր և ցածր ֆոների վրա, ցանքի նեղաշար ու խաչաձև ձևերի վարիանտներում բարձր ցուցանիշներ ունեն սովորական շարքացանի բույսերի համեմատությամբ: Ցանքի նշված ձևերի վարիանտներում մեծանում են նաև հասկի կշիռը, հասկում եղած հատիկների թիվը, հատիկի բացարձակ կշիռը և այլն: Բերքի կառուցվածքային աարների ցուցանիշների տեսակետից ցանքի խաչաձև ու նեղաշար վարիանտների միջև խիստ տարբերություններ չեն նկատվում:

Ուշաձև ցանքի առավելությունն այն է, որ այդ ցանքը կարող է իրագործվել սովորական շարքացանների միջոցով, հողի նախացանքային մշակությամբ սովորական պայմաններում: Ցանքի միևնույն նորմայի դեպքում այդ ձևի ցանքերում բույսերը մակերեսի վրա բաշխվում են ավելի համահավասար, որի հետևանքով նրանք ավելի լինունավ լինում օգտագործում արևի էներգիան, հողի սննդանյութերն ու խոնավությունը և ավելի քիչ տեղ է մնում մոխրաոտային բուսականության զարգացման համար: Ցանքի այդ ձևի դեպքում բույսերն ավելի համահավասար են զարգանում և հասունանում, քան սովորական շարքացանի դեպքում: Սակայն, խաչաձև ցանքը պահանջում է ժամանակի և միջոցների ավելի մեծ ծախս: Այդ պատճառով նրա կիրառությունը ձեռնտու է այնպիսի պայմաններում, որտեղ այն չի առաջացնում ավելի շրջանի համար սահմանված ցանքի ժամկետների ձգձգում: Ցանքի այդ ձևի դեպքում շարքացանի ուղղահայաց ու ընդլայնական երկու ընթացքների ժամանակ սերմերը միատեսակ խորություն վրա չեն բաշխվում հողի մեջ: Շարքերի համաման տեղերում (ուղղահայացը ընդլայնականի հետ) սերմերը հավաքվում են կույտերով: Բնական է, որ այդպիսի պայմաններում սնման մակերեսի փոքրություն հետևանքով բույսերը զբվում են աճման ու զարգացման համար վատ պայմաններում: Ուշաձև ցանքի դեպքում երկրորդ ընթացքի ժամանակ սերմերի մի մասը գուրս է հանվում հողի երեսը և չորային դարուն լինելու դեպքում այդ սերմերը չեն ծլում կամ ծլում են ուշ, միայն անձրևներից հետո:

Նեղաշար ցանքն իրագործվում է հատուկ նեղաշար շարքացաններով, ներկայումս արտադրվում են СУБ—48 մարկայի (Բոգաչևի սխեմայի) նեղաշար շարքացաններ: Վերջին ժամանակները, այդպիսի շարքացանների բացակայության դեպքում, նեղաշար ցանքը կատարվում է երկու սովորական շարքացանների կցորդումով, այն հաշվով, որ երկրորդ շարքացանի խոփիկներն անցնեն առաջինի շարքերի արանքներով: Նեղաշար ցանք, այդպիսի շարքացանի բացակայության պատճառով, նկարագրված ձևով կատարվել է նաև մեր փորձերում: Նեղաշար ցանքը պահանջում է հողի համեմատաբար ավելի կուլտուրական վիճակ: Այս դեպքում ժամանակի և միջոցների կրկնակի ծախս չի պահանջվում: Վերանում է գաշտում արակտորի և շարքացանի երկրորդ ընթացքի անհրաժեշտությունը, մակերեսի վրա ստացվում է բույ-

ան մըստմ վկայի մեղմմուս ղվտմբտինաստի վժմյս դ խտտտտտ դվտդմ
դտ ղյտ ղտբկտտ մդտմդ չ յտտտտտտտտտ մմտ յտտտտտտտ տ տտ իվտ
դդտդվ վկայիտ ղչ կմյմտտմտն մմյտմտմ տտտղտտտտտտտտ ղվտտտմմտ՝
տտտմտտտտ յտտմդդտտղտմմտի վմդդջ մտձտեղդ տ դդտձտմ վժդտջ Ի

ՀԱՅԴՐԱՆՈՒԹՎՈՒԹՅՈՒՆ Գ ԲԱՆԿԱԾԻՍԱԾ ՂԵՐՄ ՎԵՐ

ՀԱՅԿԱՍՏ ԶԵՐ ԹԱՐ Կ ԴՐԱԴԻԿՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ ԸՆԴՈՒՄ

դռն դեղատոլ կողմ հասկառ 08 թուի ուշին 9:15 է յարսիսի միսնկիտէ վժմզմ վիզ մոշոնկզ վժմզմ միսնթիստուիյիտէ վիզմոմթմոն ղոկմմսիսն տստ տմսն կիկնդսկ Վնվժմզմ դեղատոլ դոնդ կիկնտսս է յարսիտէ ղոյոզոզմսզ թթզմն հոսկստ 2:61 թուի ուշին 2:15 է յարսիսի յարսիտէ վիզ մոշոնկզ վժմզմ միսնկիտէ վժմզմ վսմսն ոսկնննն ոսկ վիզմզմ ղոմնտսմմոնոն

ՀԱՅԿԱՍ ԳՆԻ յԱՆԿ ՄԵ/Ը

«Երևանի քաղաքապետարանի քաղաքացիական ծառայության ղեկավարի պաշտոնի վերաբերյալ հարցազրույցի արձանագրության հիմամբ»

[illegible]

ԹԱՆԻ ՊՆԱՅԵՐԻ ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ

:(ξ կտարակետ)

Ամբողջությամբ և անհրաժեշտ է համապատասխանեցնել հետևյալ տեղանքներին:

[illegible]

-մանը քննարկում է իրենց համայնքի մասին և քննարկում է իրենց համայնքի մասին

2. Յանքի նեղաշար ու խաչաձև ձևերի վարիանտներում մինչև վեգետացիայի վերջը պահպանվող բույսերի թիվն ավելի մեծ է սովորական շարքացանի համեմատությամբ:

3. Յանքի խաչաձև ու նեղաշար ձևերի վարիանտներում մոլախոտերով աղտոտվածությունը պակաս է:

4. Յանքի փորձարկված ձևերի մեջ ամենից բարձր բերքատվության ավյալներ ստացվել են խաչաձև ու նեղաշար ձևերի վարիանտներում:

Յանքի այդ ձևերից ստացված էֆեկտն ավելի մեծ է պարարտացրած ֆոնի վրա:

5. Խաչաձև ցանքն իր էֆեկտիվությամբ համարյա հետ չի մնում նեղաշար ցանքից: Ժամանակը և միջոցները խնայելու տեսակետից ցանքի փորձարկված ձևերից մենք առավելությունը տալիս ենք ցանքի նեղաշար ձևին:

Հայկական ՍՍՌ Զյուգատնական ինստիտուտի

Ստացվել է 15 II 1954 թ.:

Ընդհանուր երկրագործության ամբիոն:

Գ Լ Խ Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Алов А. С. О новых способах посева зерновых. Журн. «Химизация соц. земледелия», 3, 1938.
2. Винер В. В. Испытание сельхоз. машин и орудий. Отчет Шатиловской с.-х. оп. станции за 1889—1905 гг. Вып. III, Изд. 1908.
3. Еникеев Г. М. Новый способ посева, 1948.
4. Колесник И. К. О способах и нормах посева зерновых колосовых культур. Журн. «Советская агрономия», 2—3, 1940.
5. Лаппо А. И. Новый метод исчисления нормы высева. Опытная агрономия, 1, 1941.
6. Лут Ф. А. Влияние способов посева, норм высева семян и удобрений на урожай твердой и мягкой яровой пшеницы. Журн. «Сов. агрономия», 4, 1951.
7. Малахов И. И. и Фольмер Н. И. Как повысить полевую всхожесть семян (обработка почвы и посев). Челябинск, 1951.
8. Мосолов В. П. Агротехника. Сельхозгиз, 1950.
9. Наливкин А. А. Твердые пшеницы. Сельхозгиз, 1953.
10. Якушкин И. В. Растениеводство. Сельхозгиз, 1953.

М. М. Симонян

Изучение способов сева яровой пшеницы в условиях Ахтинского района Армянской ССР

Резюме

В течение 1951—53 гг. в условиях Ахтинского района Армянской ССР нами изучалось влияние способов посева на урожайность яровой пшеницы сортов галгалос и кундик.

На удобренном ($N_{75}P_{75}K_{60}$) и неудобренном фонах испытывались три способа сева: обыкновенный рядовой с междурядьями в 13 см, узкорядный с междурядьями в 6.5 см и перекрестный с расстоянием 13 см $\times$ 13 см. Норма высева 6 миллионов зерен на гектар.

В наших опытах при узкорядном и перекрестном способах сева сорных растений в посевах было меньше, чем при обыкновенном рядовом способе. При одинаковой норме высева густота всходов в рядах при рядовом посеве вначале была на 5—8 % выше. В дальнейшем, в течение вегетации, число растений в посевах было больше на делянках узкорядного и перекрестного способов сева. При узкорядном и перекрестном способах сева обеспечивается более равномерное распределение растений по поверхности почвы, и потому рост и развитие их происходит в более благоприятных условиях. По удобренному фону у сорта галгалос к уборке урожая при рядовом способе сева сохранилось 79 % растений, при узкорядном способе сева—85 %, и при перекрестном севе—83 %. По неудобренному фону сохранилось растений: при рядовом способе сева—71 %, узкорядном—77 %, перекрестном—77 %. Аналогичная закономерность установлена и у сорта кундик.

Данные по урожаю говорят о том, что как на удобренном, так и на неудобренном фонах урожайность выше при узкорядном и перекрестном способах сева (на удобренном фоне на 3,5—3,6 ц/га по сравнению с обыкновенным рядовым посевом). По своей эффективности перекрестный способ сева почти не отстает от узкорядного, но требует больше затрат для посева.